

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳԱՐԱՐՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵԿՏՈՐԻ

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Ք

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լրացուցիչ մասնագիտությունների սեկտորը (այսուհետև սեկտոր) Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) շարունակական ուսուցման քաժնի կազմի մեջ մտնող ուսումնական ստորաբաժանումն է, որը կոչված է հնարավորություն ընձեռնել ՀՊԱՀ-ի ուսանողներին հիմնական մասնագիտությանը զուգահեռ համատեղված, հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում ձեռք բերել երկրորդ մասնագիտություն:

2. Լրացուցիչ մասնագիտությունների ուսուցման նպատակներն են.

- անձի կրթական պահանջների առավել լրիվ բավարարում,
- բազմակողմանի զարգացումը,
- որակավորման բարձրացումը, որոնց իրականացումը թույլ կտա ՀՊԱՀ-ի շրջանավարտներին իրենց տեղը գտնելու նոր ձևավորվող աշխատանքի շուկայում:

3. Սեկտորը ստեղծվում և լուծարվում է ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

4. Սեկտորի կառուցվածքը, գործունեության սկզբունքները, իրավասությունների շրջանակները կարգավորում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՊԱՀ-ի կանոնադրությունով և սույն կանոնակարգով:

### *2.Սեկտորի կառուցվածքը և կառավարումը*

5. Սեկտորը ներառում է հետևյալ կառուցվածքային բաժանմունքները՝ ըստ մասնագիտական ուղղվածության.

- ա). տնտեսագիտակառավարչական,
- բ). ագրարային,
- գ). ճարտարագիտական,
- դ). տեխնոլոգիական:

6. Սեկտորը իրականացնում է ուսանողների ընդունելությունը հանրապետության պետական ԲՈՒՀ-երի (նաև հավատարմագրված ոչ պետական ԲՈՒՀ-երի) ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև ՀՊԱՀ-ի պետ. քոլեջի և Հայաստանի հանրապետության գյուղ. նախարարության համակարգի քոլեջների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների թվաքանակից:

7. Ուսումնառության տևողությունը կապված է հիմնական և լրացուցիչ մասնագիտությունների ուսումնական պլանների համապատասխանությունից և կարող է կազմել ոչ ավելի, քան 3 տարի:

8. Սեկտորը կազմակերպում և իրականացնում է.

8.1. Հեռակա համակարգում ուսումնական գործընթացի խմբակային և անհատական ուսուցմամբ համապատասխան ուսումնական ծրագրեր:

8.2. Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանություն և ավարտական քննությունների անցկացում:

8.3. Ուսումնամեթոդական աշխատանքների և հրատարակման գործընթացը:

8.4. Արտադրական կազմակերպությունների հայտերով նոր տեխնոլոգիաների համապատասխան կրթական ծրագրեր:

8.5. Ֆինանսական պլանի և ուսուցման վարձաչափերի համակարգում:

9. Ուսումնառությունն ավարտած ուսանողներին շնորհվում է համալսարանական նմուշի վկայական:

10. Սեկտորը ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ կարող է ունենալ մասնաճյուղեր:

11. ՀՊԱՀ-ի ռեկտորը լրացուցիչ միջոցների հաշվին աշխատողների դրույքաչափերի և աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել տարբերակված հավելումներ, մասնագիտական վարպետության, որակյալ աշխատանքի և այլնի համար:

12. Սեկտորը ղեկավարվում է պետի կողմից, որին աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է ՀՊԱՀ-ի ռեկտորը:

13. Սեկտորի վարիչը.

13.1. Հաշվետու է բաժնի պետին, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրենին և ռեկտորին:

13.2. Իրականացնում է հսկողություն սեկտորի կառուցվածքում գտնվող ստորաբաժանումների ուսումնական գործընթացի նկատմամբ, կազմակերպում է պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման աշխատանքները:

13.3. Կազմում է ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը և ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

14. Լրացուցիչ մասնագիտությունների սեկտորի ուսումնամեթոդական աշխատանքները համակարգում է ուսումնամեթոդական կենտրոնի խորհուրդը: